ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/104

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ. ներկայացված և 22.12.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/104 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.12.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը 10.12.2020 թվականին հայտարարել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21»

ծածկագրով գնման ընթացակարգ, իր կարիքների համար՝ պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով: Հիմք՝ Պատվիրատուի 10/12/2020 թվականի ժամը 15:29 հայտարարությունը:

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեջ նշված է՝ «Պահպանությունը պետք է իրականացվի ֆիզիկական և ոչ ֆիզիկական պահպանության միջոցով»:

Վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1981.2 քմ:

Իրականացնել հերթապահություն վերահսկողության տակ գտնվող տարածքում,

Կանխարգելել, կանխել, կասեցնել և խափանել պահպանվող տարածքում իրավախախտումները.

Արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն),

Արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին»:

Պահնորդական ծառայությունները կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և օրենքով Պահնորդական գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունը՝ Կատարողը, համաձայն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի՝ **Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացումը**

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

Նման գործառույթները պետք է իրականացնի ք. Երևան Կ. Ուլնեցի 68 հասցեում շենքի տարածքում գործունեություն իրականացնող 3-րդ և 5-րդ հարկերում այլ պետական կազմակերպությունների համար, որի վերաբերյալ տեխնիկական բնութագրի մեջ չկա ոչ մի նշում կամ գրառում, ուստի տեխնիկական բնութագրի պահանջով՝ արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին, պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը դառնալու է անհնարին:

Կատարողը, ք. Երևան Կ. Ուլնեցի 68 հասցեում գործունեություն իրականացնող 3-րդ և 5-րդ հարկերում՝ պայմանագրի կողմ չհանդիսացող, այլ պետական

կազմակերպությունների համար, իրավունք չունենալով կամ չկարողանալով կազմակերպել տեխնիկական բնութագրով սահմանված պարտավորությունը, կատարելով տվյալ կազմակերպությունների պահանջը կարող է պատվիրատուի կողմից ենթարկվել համապատասխան պատասխանատվության, ուստի և Գնման առարկայի հատկանիշները և տեխնիկական բնութագրի մեջ նշված պահանջները բավարար ճշտությամբ սահմանված չեն՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Այսինքն, գնման առարկայի բնութագրում ամբողջությամբ և հստակ նկարագրված չեն ձեռք բերվող ծառայության հատկանիշները:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ Գնման առարկայի բնութագրերը

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4.Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի՝ Գնումների ընթացակարգի կասեցումը.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորություն չի տալիս մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 46-րդ, 50-րդ և 51-րդ հոդվածներով՝ խնդրում է.

1.Կասեցնել «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» գնման ընթացակարգը և պատվիրատուին արգելել կատարել որոշակի գործողություններ, պարտավորեցնել նաև ընդունել համապատասխան որոշումներ,

2.Բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» գնման ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2020թ. ժամը 10:50-ին, 30.12.2020թ. ժամը 10:00-ին և 18.01.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.12.2020թ. գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը 16 դեկտեմբերի 2020թ. ծանուցվել է «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ, իսկ 22 դեկտեմբերի 2020թ. Բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստի վերաբերյալ: Բողոքի վերաբերյալ Հիմնադրամը հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին չի մասնակցել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊ ընկերությունը:

Գնանշման հարցման հրավերով տրվել է պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույցով (Հավելված N 1) սահմանվող ծառայության տեխնիկական բնութագիրը, ըստ որի, մասնավորապես, սահմանվում է վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը՝ առանց այն հարկերի տարանջատելու:

Տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ ընդօրինակում է այն տեխնիկական բնութագիրը, որի հիման վրա «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊ ընկերությունը 2019թ. 09 ապրիլի «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-19/1» պայմանագրի հիման վրա նույն Կարապետ Ուլնեցի 68 հասցեում ծառայություններ է մատուցել/մատուցում Հիմնադրամին: Միևնույն տեխնիկական բնութագրի առկայությամբ տվյալ պայմանագրով ծառայությունների մատուցման ողջ ընթացքում ընկերությունը երբևէ բողոք-պահանջ, որը որևէ առնչություն կարող էր ունենալ Բողոքի բովանդակության հետ, չի ներկայացրել Հիմնադրամին, որպիսի պայմաններում Հիմնադրամի համար անհասկանալի են թվում ընկերության փաստարկները այժմ, սույն Բողոքի շրջանակներում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը ամրագրում է հրավերի պարզաբանման և դրանում փոփոխություններ կատարելու ընթացակարգը: Այսպես, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»: Սույն դրույթը հստակ ամրագրում է ընկերության իրավունքը տվյալ դեպքում տեխնիկական բնութագրում վերջինիս համար անհասկանալի դրույթները հստակեցնելու և պարզաբանելու նպատակով: Հարկ է նշել, որ ընկերությունը չի իրացրել իր այդ իրավունքը, նաև օրենքով սահմանված ժամկետներում, ինչը սույն Բողոքի շրջանակներում կրկին անհասկանալի է Հիմնադրամի համար:

«Ծառայության հատկանիշները ամբողջությամբ և հստակ նկարագրված չլինելու դեպքում», ինչպես նշում է ընկերությունը Բողոքի բովանդակության մեջ, վերջինս իրավասու էր պարզաբանելու անհասկանալին: Իսկ նման ընթացակարգի բացակայության պայմաններում Հիմնադրամն անհիմն և կասկածելի է համարում ընկերության գործողությունները և ոչ իրավաչափ պահանջները: Ընդ որում, օրենքի այդ դրույթը ամրագրված է նաև «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնանշման հարցման հրավերի բովանդակության 1-ին մասի 3.1 կետով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներով՝ խնդրում է ամբողջությամբ մերժել Բողոքը՝ այն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2020թ. ժամը 10:50-ին, 30.12.2020թ. ժամը 10:00-ին և 18.01.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/104 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/104 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով սահմանվել է Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը*:*

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 25.12.2020թ. և 15.01.2021թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի ***բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող*** ապրանքի, աշխատանքի կամ

ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***<u>պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.</u>***

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Այսպիսով՝ ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր - գնման

ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

«Պահպանությունը պետք է իրականացվի ֆիզիկական և ոչ ֆիզիկական պահպանության միջոցով:

Վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1981.2 քմ:

***Անվտանգության (պահնորդական) ծառայությունը մատուցվելու է մեկ պահակակետում**, ամեն օր՝ 24 ժամյա ռեժիմով, ներառյալ հանգստի օրերը՝ շաբաթ և կիրակի, տոները և հիշատակի օրերը:*

Ծառայությունը պետք է իրականացնի առնվազն 3 (երեք) պահնորդ:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող նվազագույն պահանջներն են.

1. Նախատեսված պահնորդային ծառայություններ կատարելու համար անհրաժեշտ պահնորդների քանակը հերթափոխով աշխատելու համար՝ առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ կառավարության 2005թ.-ի օգոստոսի 11-ի թիվ 1223-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով և ունենան պահնորդի որակավորում («Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

2. Պահպանության ենթակա պահակակետի աշխատակիցները (Պահնորդները) պետք է ապահովված լինեն հետևյալ միջոցներով՝ ձեռքի դյուրակիր լապտեր, դեղատուփ, ռետինե մահակ, մետաղական ձեռնաշղթա, որոնց համար պետք է անցած լինեն համապատասխան դասընթացներ և ունենան վկայական:

- ***Իրականացնել հերթապահություն վերահսկողության տակ գտնվող տարածքում**,*
- *Կանխարգելել, կանխել, կասեցնել և խափանել պահպանվող տարածքում իրավախախտումները.*
- *Արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն),*
- ***Արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք** աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին,*
- *Կատարել անհրաժեշտ գործողություններ կապված վթարների կանխարգելման հետ, վտանգի առաջացման դեպքում անմիջապես տեղյակ պահել*

Պատվիրատուին :

- *Ապահովել պահնորդների առկայությունը վերահսկողության տակ գտնվող տարածքում՝ տեղորոշման սարքավորումների ՝ GPS TRACKERS - ների միջոցով, որոնք էլեկտրոնային բանալիների միջոցով և ծրագրային ապահովմամբ հսկում են պահնորդի հետագծի շարժը:*
- *Արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):*
- *Ապահովել հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը,*
- *Կատարողի ծառայողական մեքենաներով գիշերային ժամերին 1-2 անգամ կատարել ստուգում,*
- *Համակարգի ահազանգման դեպքում Կատարողի ծառայողական մեքենաներով արագ արձագանքել,*
- *Պահպանության ենթակա օբյեկտը պետք է պահպանվի կատարողի ահազանգման կենտրոնացված պահպանության համակարգի (այսուհետ՝ ԱԿՊՀ) միջոցով (առնվազն GSM/GPRS/ կապ, հեռախոսակապ):*
- *ԱԿՊՀ-ի միջոցով ծառայությունն իրականացվում է օբյեկտում՝ աշխատանքային և ոչ աշխատանքային /հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի, տոներ և հիշատակի օրեր/ օրերին 24-ժամյա ռեժիմով:*
- *Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին»:*

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ Կատարողը գործառույթները պետք է իրականացնի ք. Երևան Կ. Ուլնեցի 68 հասցեում շենքի տարածքում գործունեություն իրականացնող 3-րդ և 5-րդ հարկերում այլ պետական կազմակերպություններ համար, որի վերաբերյալ տեխնիկական բնութագրում, չկա ոչ մի նշում կամ գրառում, ուստի տեխնիկական բնութագրի պահանջով՝ արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին, պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը դառնալու է անհնարին:

Ուստի Կատարողը, ք. Երևան Կ. Ուլնեցի 68 հասցեում գործունեություն իրականացնող 3-րդ և 5-րդ հարկերում՝ պայմանագրի կողմ չհանդիսացող այլ պետական

կազմակերպությունների համար իրավունք չունենալով կամ չկարողանալով կազմակերպել տեխնիկական բնութագրով սահմանված պարտավորությունը, կատարելով տվյալ կազմակերպությունների պահանջը, կարող է պատվիրատուի կողմից ենթարկվել համապատասխան պատասխանատվության, ուստի և Գնման առարկայի հատկանիշները և տեխնիկական բնութագրի մեջ նշված պահանջները բավարար ճշտությամբ սահմանված չեն՝ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ի պատասխան Ընկերության պնդմանը՝ Պատվիրատուն, ի լրումն 25.12.2020թ. դիրքորոշման, 15.01.2021թ. գրությամբ հայտնել է, որ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագարով ընթացակարգով գնանշման հարցման մասին հայտարարությամբ տեխնիկական բնութագրում վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը նշված է 1981.2 քմ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող վարչական շենքի մակերերսը 1543.4քմ է: Առկա է 1.3քմ (3.3 խ.մ.) օրինական պարիսպ, 77.8քմ ինքնակամ շինություն և 8.7գծմ ինքնակամ պարիսպ: Տեխնիկական բնութագրում նշված թվի տարբերությունը պայմանավորված է վարչական շենքի պահպանման ընդհանուր անվտանգությամբ. շենքի մերձակայքում տեղադրված անվտանգության համակարգի տեսախցիկներ, հսկողության ենթակա տարածքն ընդգրկում է նաև շենքի հարակից բակը, վարչական շենքն իր հարակից տարածքով ամբողջությամբ վերահսկվում է թե անվտանգության աշխատակիցների կողմից տեղում և թե հիմնադրամի ղեկավարության կողմից նաև աշխատավայրից դուրս»:

Միաժամանակ Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիրը, ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, արձանագրում եմ հետևյալը.

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

պահպանվող օբյեկտ՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի համաձայն պահպանության ենթակա գույք (տարածք).

անցագրային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտ մուտքի և ելքի համար սահմանված կարգ, որն ապահովում է անձանց և տրանսպորտային միջոցների վերահսկելի մուտքը և ելքը պահպանվող օբյեկտ.

ներօբյեկտային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտի ներսում անվտանգության ապահովման կարգ և դրա իրականացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, մասնավորապես սահմանվել է, որ.

- ***վերահսկողության տակ գտնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1981.2 քմ,***
- ***անվտանգության (պահնորդական) ծառայությունը մատուցվելու է մեկ պահակակետում,***
- ***իրականացնել հերթապահություն վերահսկողության տակ գտնվող տարածքում,***
- ***արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք:***

Միաժամանակ արձանագրում եմ, որ ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ անշարժ գույքի գտնվելու վայրն է Կ. Ուլնեցու փողոց 68-ը, տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1543.4 քմ: Լրացուցիչ նշումներ և տեղեկություններում նշված է, որ հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքը գրանցվել է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 17 կետի պահանջների համաձայն: Առկա է 1.3քմ (3.3 խ.մ.) օրինական պարիսպ, 77.8քմ ինքնակամ շինություն և 8.7գծմ ինքնակամ պարիսպ:

Այսպիսով՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի ***բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող*** ապրանքի, աշխատանքի կամ ***ծառայության հատկանիշները:***

Այսպիսով՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործի քննությամբ ներկայացված փաստարկները, ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ բողոքով վիճարկվող մասով՝ գտնում եմ, որ ««Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, իր կարիքին համապատասխան գնման առարկայի մեջ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում Կ. Ուլնեցի 68 հասցեում իր վերահսկողության տակ գտնվող տարածքի համար պահնորդական ծառայության գնում իրականացնելու նպատակով Ընթացակարգի հրավերով նախատեսելով պահպանության ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը՝ առանց այն հարկերի տարանջատելու՝ անկախ շենքի տարածքում 3-րդ և 5-րդ հարկերում գործունեություն իրականացնող այլ պետական կազմակերպությունների, թույլ չի տվել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ տեխնիկական բնութագրի կազմման համար սահմանվող պահանջների խախտումներ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Կատարողը գործառույթները պետք է իրականացնի ք. Երևան Կ. Ուլնեցի 68 հասցեում շենքի տարածքում գործունեություն իրականացնող 3-րդ և 5-րդ հարկերում այլ պետական կազմակերպություններ համար, որի վերաբերյալ տեխնիկական բնութագրի մեջ չկա ոչ մի նշում կամ գրառում, ուստի

տեխնիկական բնութագրի պահանջով՝ արգելել կողմնակի անձանց մուտքը Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող մասնաշենք աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին, պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը դառնալու է անհնարին, ապա գտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ թիկնապահական կամ պահնորդական գործառույթներ իրականացնելիս թիկնապահը և պահնորդը, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, իրավունք ունեն պահպանվող օբյեկտի տարածքում գտնվող անձանցից պահանջելու անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի պահանջների պահպանում, ընդ որում՝ Պատվիրատուի կողմից «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-01/01-21» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահնորդական ծառայության ձեռքբերման համար նախատեսվել է Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող պահպանության ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը՝ առանց այն հարկերի տարանջատելու, անկախ շենքի տարածքում 3-րդ և 5-րդ հարկերում գործունեություն իրականացնող այլ պետական կազմակերպությունների:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**